ՀԱՅ-ԵԿԵՂԵՑԻ

ԱՄՍԱԹԵՐԹ

ԿՐՕՆԱԿԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ



ՍԵՊՏԵՄԲԵՐ — 1901

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ Ժ.Թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

		Էջ
1.	*Խմբագրական. — Վենետիոյ Մխիթարեանց երկերիւրաւեայ Յորելինի Առթիւ*	257
2.	*Կեանք Յիսուսի. — Մասն Զ.*	262
3.	*Քարոզ. — Զորրորդ Կիւրակէի զկնի Հրեգաշտեան.*	270
4.	*Թղթակցութիւն. — Նաւակ Կ. Պոլսեն.*	275
	Նաւակ Հնդկաստանեն.	278
5.	*Փերթուած. — Բեթլեհեմի Մանկիկ.*	282

Հանդիսիս բաժանորդագինն է ամեն տեղի համար տարեկան 4 Շիլինգ կամ 5 Ֆրանք, վեցամսեայ 2 Շիլինգ կամ 2½ Ֆրանք թղթատարաւ։

Տանկաստանի քաղաքաց մէջ ձեռքէ կը ծախուի հատը՝ Երկու (2) Դահեկանի։

Խմբագրութեան կամ բաժանորդագրութեան վերաբերեալ որ եւ իցէ գրութիւն պէտք է ուղղել առ Խմբագրութիւն Հանդիսիս, հետեւեալ հասցէիս.

ARMENIAN RECTORY,

Upper Brook Street,

MANCHESTER.

ՀԱՅ-ԵԿԵՂԵՑԻ

ԱՄՍԱԹԵՐԹ

ԿՐՕՆԱԿԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ

ԹԻՒ 19 ԵՐԿՐՈՐԴՏԱՐԻ ՍԵՊՏԵՄԲԵՐ 1901

ՎԵՆԵՏԿՈՅ ՄԽԻԹԱՐԵԱՆՑ ԵՐԿԵՐԻՒՐԱՄԵԱՅ ՅՈԲԵԼԻՆԻ ԱՌԹԻՒ

Ամսոյս 8ին Վենետկոյ Մխիթարեան Միաբանութիւնը տօնեց իւր հաստատութեան երկհարիւրամեայ տարեդարձն։ Եկեղեցական և առանձին շքեղ հանդէսներ կատարուեցան ի Ներկայութեան Միաբանութեան անդամոց մեծագոյն մասին որք փութացած էին այլ և այլ երկիրներէ՝ իւրեանց Մայր վանքը Մխիթար Աբբահօր գերեզմանի շուրջը՝ տօնելու համար երկու հարիւր ամայ մեղուաջան գործունէութեան յիշատակն։ Երկու հարիւրի չափ հեռագիրներ եւ գրութիւններ յայտնեցին այն ոգեւորութիւն որով թէ Ազգայինք եւ թէ օտարազգիք կը-ինդակցէին Միաբանութեան հետ այս փառաւոր Յոբելեանի առթիւ։ Դժբախտաբար ճանապարհի հեռաւորութիւնն որպէս եւ մի քանի ուրիշ պատճառներ արգելք եղած էին հեռաւոր հայրենեաց եւ օտար երկրաց մէջ բնակող ազգայնոց անձնական մասնակցութիւնն։ Սակայն մեր Վեհ. Հայրապետն մեր Ազգայնոց այս պակասութիւնն լցուցած էր՝ մասնաւոր կոնդակաւ իւր ներկայացուցիչը ղրկելով. նոյնպէս ներկայ էին ուրիշ երկու հայ հոգեւորականք։

Այն բոլոր մասնաւոր հեռագիրներ եւ գրութիւններ որք կարդացուեցան Սեպտեմբեր 8ի եւ 9ի հանդիսականաց առջեւ ի Ս. Ղազար՝ կ'արտայայտէին օտարազգեաց հիացումն Մխիթարեան Միաբանութեան վերայ, եւ մերայնոց երախտագիտական զգացումն հանդէպ այն Միաբանութեան, որ մեր ազգային հին լեզուն, գրականութիւնն ու պատմութիւնն փոշիներու մէջէն հանեց, եւ նոցա ուսումնասիրու-

թիւնը ոչ թէ միայն մերայնոց համար դիւրացոյց, այլ եւ օտարազգեաց ծանօթացոյց, եւ եւրոպացի գիտնականաց խթան եղաւ մեր լեզուի նշխարներն եւս ուսումնասիրելու նոյն գիտնական եղանակաւ որով դասական եւ ուրիշ հին լեզուներ ուսումնասիրուած են։

Միայն՝ խոր ուսումնասիրութիւն եւ նախապաշարում կրնան անտես առնել այն մեծամեծ ծառայութիւններ զորս այս բազմարդիւն Միաբանութիւնը մատուցած է (թէպէտ եւ ըստ մեծի մասին անուղղակի կերպիւ) մեր Հայ. Եկեղեցւոյն։ Մինչդեռ մեր դիւաւոր վանքերու մէջ անհամար ձեռագիրներ դիզուած կրնան, և նիւթական միջոցներն եւս չեն պակսիր մեզ, տակաւին Մխիթարեանց դիմելու պէտք ունինք գիտնալու համար թէ մեր երանաշնորհ նախկին վարդապետներ ի՞նչ քարոզեցին եւ ի՞նչ ուսուցին։ Աշխարհիս վերայ գտնուած բոլոր հայ տպարաններ միասին տակաւին չեն կրցած արտադրել մէկ տասներորդն այն եկեղեցական նախնի հայ և օտարազգի վարդապետաց գրուածոց զոր Վենետիկոյ վանքի տպարան արտադրած է, և այդու ամէն հայ եկեղեցականի համար ուսման և իւր պաշտօնի մէջ զարգանալու և կրթուելու անհրաժեշտ ուղեցոյցներ ընծայած է։ Մինչեւ ցայսօր ամենէն հարազատ և անթերի հայկական Աստուածաշունչն Վենետիկէն գնելու է։ Ս. Գրոց այլ և այլ մասանց, որպէս և Շարականաց, Նարեկայ աղօթից մեկնութիւնքն մինչեւ ցայսօր ի Վենետիկ տպագրեալ գիրքերէ ուսանելու կարօտն առաւել կամ նուազ գոհացուցիչ կերպով կը լցուցանենք։

Յետ այսր ամենայնի Վենետկոյ Մխիթարեանց կողմէ մեր Եկեղեցւոյ մատուցած ծառայութիւնն ուրանալ կամ անդիտանալ կարելի չէ, և նոյն իսկ այն պարագայն որ այդ Միաբանութիւնը Հռովմայ Հայրապետի իրաւասութեան ներքոյ կը պահէ՝ արդեւք չի կրնար լինել որ մեր ձեռքը գտնուած յայտնի իրողութեանց համար մեր երախտագիտութիւնը ցուցնենք բանիւ և գործով։ Վենետկոյ Մխիթարեանց բազմաթիւ հրատարակութեանց մէջ այնքան սակաւ են Հռովմայ պահանջներն հաստատող ակնարկութիւնք, և այդ ակնարկութիւնք այնքան անղօր են, որ այս տողեր գրողի անկեղծ խոստովանութիւնն է թէ չնորհիւ իւր քառասնամեայ ուսումնասիրութեան Վենետկոյ Մխիթարեանց հրատարակութեանց՝ սորված է օր ըստ օրէ աւելի հաւատարիմ մնալ Հայ. Եկեղեցւոյ օրէնսաց և ուսմունքներուն, և Հռովմայ պահանջներն հաստատող յիշեալ ակնարկութիւնք աւելի հակառակ

ազդեցութիւն գործած են իւր վերայ, և Հռովմայ պահանջ-
ների ի՛նչ աստիճան տղայական լինելն ապացուցած են
քան թէ այլ ինչ. այնպէս որ Հռովմայ յահերն աւելի և
պաշտպանուած կամ գէթ յարգուած կըլինէին եթէ այդ
պատահական և Մխիթարեանց գրականութեան մէջ կա-
ըի յոյժ աննշան տեղ բռնող ակնարկութիւնք ամենե-
ւին չը լինէին։

Ինչպէս մեր ազգային թերթեր վերջերս բազմիցս կրկնե-
ցին, Մխիթար ազգաւ և կրօնիւ հայ էր և հարազատ զա-
ւակ Հայ. Եկեղեցւոյ. սակայն իւր ժամանակակիցներէն հա-
լածուեցաւ մասամբ իւր առաքինի վարուց պատճառաւ և
մասամբ ևս որովհետև նա չէր դաւաներ թէ Հայ. Եկեղե-
ցւոյ հարազատ զաւակ լինելու համար պէտք է անպատճառ
միւս քրիստոնեայ Եկեղեցիներն ատել և արհամարհել, և
մանաւորապէս Մխիթարայ անձնական կարծիքն էր թէ էական
կէտերու մէջ անհամաձայնութիւն չկայ Հայկական և Հռով-
մէական Եկեղեցեաց միջև։ Հետեւարար երբ Մխիթար հալած-
ուեցաւ և տարագիր եղաւ իւր հայրենիքէն, նա ստիպուե-
ցաւ Իտալական հողի վերայ ապաստանիլ. կաթոլիկ ազգէ
և Հռովմայ Եկեղեցիէն պաշտպանութիւն և քաջալերու-
թիւն ստացաւ։ Սակայն ոչ ինքն և ոչ իւր Միաբանու-
նութիւնը սկիզբներն Ամենայն Հայոց Հայրապետի իշխա-
նութենէն հեռանալու նպատակ ունէին, և ամեն ճիգ կը-
թափէին Հայոց Ազգի և Եկեղեցւոյ անկախ զարգացման եւ
բարձրացման համար։ Բայց նոյն իսկ հեռուէն հալածանքը
չարունակեցաւ, այնքան «կաթոլիկ էք» ըսին, մինչեւ Մխի-
թարեանք եւս անշահ վիճաբանութիւնը դադրեցնելու հա-
մար՝ պատասխանեցին «Այդպէս եղիցի։»

Միւս կողմանէ Հռովմայ Պապի անմիջական իշխանութեան
և պաշտպանութեան ներքոյ՝ լատին կղերէն ևս կըհալած-
ուէին իբրեւ ոչ բաւական կաթոլիկ։ Ցարակոյս չկայ որ
կաթոլիկ երկրի մէջ ապաստանող կրօնական մի՛յարանու-
թիւն մի, որ կաթոլիկ Եկեղեցիէն պաշտպանութիւն, քա-
ջալերութիւն և մինչեւ իսկ նիւթական օժանդակութիւն
կըստանար, քաղաքավարութեան և երախտագիտութեան
պարտք մի ունէր նոյն Եկեղեցւոյ Հայրապետի հան-
դէպ։ Ռուսիոյ մէջ մեք չենք վարաներ Վեհափառ Զարի
անունը յիշել Ս. Պատարագի մէջ, ուրիշ երկրաց մէջ ևս
նոյն երկրաց իշխանները անունները յիշելով ըստ առա-
քելական պատուիրանի՝ անոնց համար աղօթել։ Ի՞նչ Ղնաս

ունի, կրխորհէր Մխիթար, Արեւմտեան մեծ Հայրապետի անունն յիշել Ս. Պատարագի մէջ, այն ինչ այդ Հայրապետի հովանաւորութիւնն էր որ զինքն անվնաս կրպահէր իւր հայրենակցաց հալածանքներէն։ Այսպէս երկու սուրերու մէջ երկար ժամանակ տանջուեցան Մխիթարայ որդիք առանց իւրեանց հիմնադրի գլխաւոր նպատակէն չեղելու՝ Ազգին և Հայ. Եկեղեցւոյն օգտակար լինիլ։ Ոչ ինչ բան այնքան վիշտ կրպատճառէր Մխիթարեան մրաբանութեանը որքան լատինութեան և կաթոլիկութեան արագ տարածումն և զատ կաթոլիկ նուիրապետութեան հաստատութիւնը մեր Ազգի մէջ։ Այս բաժանում ստիպեց Մխիթարեաններն գէթ առ երեսս այդ հայ կաթոլիկ կուսակցութեան պատկանիլ։ Տարբեր կերպով վարուիլ կարելի չէր, բայց եթէ ձգել զոհել ինչ որ այնքան տառապանօք հաստատած էին Ս. Ղազարու կղզեկին վերայ և փախչել այդ երկրէն։ Այսու հանդերձ Մխիթարեանք իւրեանց հիմնական սկզբանց հաւատարիմ մնացին և ի հայրենիս տարածուող կաթոլիկաց ծայրայեղութեանց մասնակից չեղան։ Կրօնական արարողութեանց մէջ մտցուցած փոփոխութիւնք Մխիթարեաններէ քաջալերութիւն չգտան, նոյն իսկ երբ խնդիրն ամենածանր վարդապետական իրայ կրպատկանէր, ինչպէս Հոգւոյն Սրբոյ բղխումն, Քրիստոսի բնութիւն, Քաւարանի վարդապետութիւն եւ այլն։ Մէկ բան մնայն արարին. մինչ ջանացան երկոքին Եկեղեցեաց վարդապետութիւնք միմեանց համաձայնեցնել ու հաշտեցնել, առանց իւրեանց ազգայինը զոհելու կամ օտարինը արհամարհելու։ Տրտմութեամբ դիտեցին հայ կաթոլիկաց օր ըստ օրէ սաստկացող լատինամոլութիւնը, ի բոլոր սրտէ ատեցին այն ազգային եկեղեցական պատմութեան խեղաթիւրումներն, եկեղեցական մատենից աղաւաղումներն որ այնքան սիրելի դարձած էին Վիեննայի Մխիթարեանց, որով այս վերջինք կրցան յաչս Հռովմայ աւելի հարազատ կաթոլիկներ համարուիլ (որպէս էին արդեամբ) քան թէ Վենետկեցիք։ Այսու հանդերձ շրջահայեցութեամբ վարուելու պէտքը կրզգային Վենետկեցիք, և նախամեծար համարեցին եկեղեցական մատեաններ ամենեւին չտպագրել քան թէ այն անտեղի աղաւաղումներն ընդունիլ զոր Հռովմ կրպահանջէր հայ կաթոլիկներէն. եւ Ս. Ղազարու մատրան մէջ անփոփոխ պահեցին Հայ. Եկեղեցւոյ ծէսեր և արարողութիւններ նոյն իսկ հակառակ Հռովմայ հրամանին, մինչեւ Հռովմ ստիպուեցաւ իւր հրամանը փոխել։ Պիոս Թի պէս

խրոխտ և ինքզինքն ատուածացնող Պապի ժամանակ կարելի չպիտի լինէր հրատարակել ժամակարգութեան մատեանն զոր ներկայ խաղաղասէր եւ խոհեմ եւ ալեօք ուեղի խոհեմացեալ Լեւոն ԺԳ արտօնեց։ Այս գիրքը որ երեք տարուայ առաջ հրատարակուեցաւ, որքան Վենետկոյ Մխիթարեան Միաբանութեան պատիւ կբերէ, նոյնքան եթէ ոչ աւելի Հռովմայ ներկայ Հայրապետի ներողամտութիւնը կըցուցնէ։ Մինչդեռ ատուածաբանական կարեւոր խնդիրներու պատճառաւ դարերով լատին և յոյն ատուածաբաններ, Պապեր ու Ցունական Պատրիարքներ, լատինամիտ և հայ վարդապետներ իրարու գլուխ պատառած են, այսօր Լեւոն ԺԳ բացարձակապէս կըզիջանի ի նպաստ Հայ. Եկեղեցւոյ։ և մեր ժամակարգութեան գիրքը տպագրել կըտայ Վենետկեան Մխիթարեանց ձեռամբ գրեթէ անփոփոխ։ Ի հնումն մեր և Լատին Եկեղեցւոյ վիճաբանութեան առարկայ եղող կէտերն բազմաթիւ էին, երբեմն 7, երբեմն 15 և երբեմն 20 էն աւելի։ Իսկ այսօր չնորհիւ Վենետկոյ Մխիթարեանց, այդ ամենը կարգի դրուած է ի նպաստ Հայ. Եկեղեցւոյ, և մնացած է միայն գերիշխանութեան կարեւոր խնդիրն։ Այս գայթակղութեան քարն ևս գուցէ օր մի նոյնքան անակնկալ և նոյնքան լուին վերնայ մեր ազգի մէջէն թերեւս դարձեալ Մխիթարեանց չնորհիւ և դարձեալ կըյուսամք ի նպաստ Հայ. Եկեղեցւոյ։ Առ այժմ գոհ լինելու ենք որ հայ կաթոլիկ հասարակութիւնը Վենետկոյ Մխիթարեանց պէս առաջնորդներ ունի, որք Մխիթարայ աւանդութեանց հաւատարիմ՝ միշտ դէմ պիտի դնեն լատինամիտ ոտնձգութեանց և ամեն կերպով պիտի աշխատին մեր ազգի այդ բաւական ստուար հատուածն ազգային և կրօնական աւանդութիւններէ և սկզբունքներէ օտարանալու առաջն առնել մինչև աւելի երջանիկ օրերու հանդիպինք։

Այս միտքով է որ մեր Ազգի ողջամիտ դասն Մխիթարեան Միաբանութիւնը ճանչցած եւ սիրած է. այս գիտակցութեամբն Ազգիս Վեհ. Հայրապետն իւր չնորհաւորական ողջոյններ եւ օրհնութիւններ կըղրկէր նոցա երկհարիւրամեայ Յոբելինի առթիւ. վերոյնշանակեալքն են մեր յոյսերն այդ պատուական Միաբանութեան ապագայ գործունէութեան մասին, եւ կըմաղթեմք ի բոլոր սրտէ որ այժմեան աւելի դիւրին միջոցներու պիտի յաջողին ի կատար հասուցանել ինչ որ երջանկայիշատակ Մխիթար Աբրահօր ամենամեծ բաղձանքն, եւ իւր հիմնարկութեան իսկական նպատակն էր։

ԿԵԱՆՔ ՅԻՍՈՒՍԻ

ԻՐ ՄԱՆԿՈՒԹԻՒՆԷՆ ՄԻՆՉԵՒ ՀԱՄԲԱՌՆԱԼԸ ՓԱՌՕՔ Ի ՅԵՐԿԻՆՍ

Ի ԳԵՐ. ՏԷՐ ՂԵՒՈՆԴ ԵՊԻՍԿՈՊՈՍԷ ՇԻՇՄԱՆԵԱՆ

Զ

Մանկութիւն Յիսուսի. — Իր խարոզութիւնը Տաճարին մէջ։

Աստուածորդւոյն ծնունդը՝ իր նախընթաց, յաջորդող ու հետեւորդ պարագաներուն մէջ, նորանշան հրաշալիքներու անմիջական շարունակութիւն մըն է։ Երկնային աւետիսը, Եղիսաբեթի ու Զաքարիայի փառաբանութիւնները, ամենօրհնեալ Կուսին օրհնութիւնը, հրեշտակներուն երեւնալը՝ Բեթլեհեմի մէջ, խաչնարած հովիւներուն, Մոգերուն առաջնորդող Աստղը, Սիմէօնի մարգարէութիւնները, Աստուածային Նախախնամութիւնը՝ զմանուկն Յիսուս փրկելու համար Հերովդէսի կատաղութենէն, — այս ամէն սքանչելիքները, վերջապէս, ցոյց կուտային թէ՝ իրենցմէ ետին ալ յաջորդաբար տեղի պիտի ունենան արտակարգ դէպքեր՝ նոյնչափ հրաշալի ... — բայց, ոչ, Յիսուսի շուրջը յանկարծ կըլլէ ամէն բան. կ'աներեւութանայ, կարծես, Յիսուս, կըծածկուի անոր կեանքը անթափանց քողով մը, կ'ապրի՝ երեսուն երկար տարիներ, աղքատիկ ու չքաւոր, կ'ապրի անծանօթ ամէնուն, անծանօթ՝ բոլոր աշխարհի, բնաւ չի տեսնուիր, չի պատմուիր, իր վրայ բան մը՝ որ արտաքուստ գոնէ որոշէ զինքը պարզ մահկանացուներէ։ Իր մանկութիւնը, պատանեկութիւնը երիտասարդութիւնը՝ համակ հրաշալիք, երեսուն տարի կ'անցնին, կըսահին ստորին դիր զաքաղաքի մը մէջ՝ Նազարեթի՝ զոր արհամարհելով կ'արհամարհէին Հրէայք։ Նոյն իսկ տեղւոյն բնակիչները իբրեւ ողորմելի արհեստաւորի մը զաւակը կըճանչնան զինքը՝ որ հիւսնութեան մէջ իր հօրը՝ Յովսեփին տեղը՝ պիտի բռնէ՝ առանց իմանալու թէ՝ հիւսանն Յովսեփայ այդ անծանօթ զաւակը, ողորմելի կարծուած իրենց այդ յետին հայրենակիցը՝ նոյն ինքն աշխարհի Փրկիչն է՝ որուն կ'ակնկալէին։

Սրբազան Աւետարանիչը՝ Յիսուսի քողարկուած այդ կեանքին վրայ խօսք մը միայն կ'ըսէ ու կըլլէ — « Եւ մանուկն

աճէր և զօրանայր լի իմաստութեամբ, շնորհք Աստուծոյ էին ի վերայ նորա» (Ղ.-Կ. Բ. 40)։ Այս միակ խօսքին մէջ կ'ամփոփէ Յիսուսի երեսնամեայ կենցաղը՝ զոր սակայն կ'արժէ ուսումնասիրել։

Եւ ի՞նչ կընշանակէ Սրբազան Աւետարանչին այս խօսքը, ի՞նչպէս պէտք է հասկնալ։ — Յիսուս՝ իր մանկութեան առաջին տարիներուն մէջ կ'աճեր ու կրզօրանար մարմնով՝ միւս մանկանացու մանուկներուն նման, ըստ որում, այս մասին, կամաւ հպատակած էր բնութեան օրէնքին, բայց հոգւով ալ կ'աճեր ու կրզօրանար... իր մտաւորական կարողութիւնը. իր սիրտը, իր զգացումներն ալ կըզարգնանային իր զգայարանքներուն ու մարդկային մարմնոյն կազմութեանը հետ։

Եկեղեցական Ս. Հարք համաձայնութեամբ կ'ըսեն թէ՝ Յիսուսի մտաւորական կարողութիւնը ատիճանաբար յայտնուեցաւ, թէպէտ մայրենի կուսական արգանդին մէջ յղացուած պահուն իսկ լրումն էր իմաստութեան և շնորհաց, հետեւաբար աճելն ու զօրանալը՝ զոր կ'ակնարկէ Ս. Աւետարանիչը՝ երեւութապէս էին՝ զոր ինքը կամեցաւ ցոյց տալ յանձին՝ իբրեւ աւելի օգտակար, աւելի նպաստաւոր մեզ մանկանացուններուս, վասն զի՝ եթէ իբրեւ փոքրիկ մանուկ, կանուխէն ցոյց տար իր բովանդակ մտաւորական կարողութիւնն ու զօրութիւնը, ընութիւնէ գերիվեր նորանշան հրաշալիք մը պիտի նկատուէին անոնք ամէն կողմէ, և Յիսուս պիտի ճանչցուէր այն ատեն Ոգի մը թերեւս՝ մանկական երեւութի ներքեւ, քան երբէք իսկական մանուկ մը՝ ծնեալ որդի մարդոյ։

Ս. Հայրապետներն ընդ որս և համայն աստուածաբաններ կ'ընդունին թէ՝ մանուկ Յիսուսի մտաւորական կարողութիւնը՝ իբրեւ որդւոյ մարդոյ՝ անհուն, անսահման չէր կրնար ըլլալ, այլ «աճէր և զօրանայր» ըստ Աւետարանի ճշմարտութեան, իր հասակին հետ, իր մարմնոյ գործարանաց և զգայարանաց աճմամբն ու զօրանալովը, և որովհետեւ Փրկիչն ամենակարող ոչ միայն հաճեցաւ երեւնալ մարդ կատարեալ, այլ բնական օրէնքի ներքեւ, նաև մանուկ կատարեալ, ուստի և հպատակեցաւ մարդկային բնական զարգացմանն, այն է՝ մանկական արտաքուստ, մանկական տկարութեան, և, մանուկի մը սովորական ամէն հանգամանքներուն, ինչպէս նաև. իր հասակին աճմանը հետ՝ իր մտաւորական կարողութեան զարգացմանը,

և սակայն՝ « չնորհ Աստուծոյ էին ի վերայ նորա » .— Շնորհ ներքին՝ որուն ինքն էր անսպառ աղբիւրը և որուն եկած էր զմեզ իսկ մասնակցելու . Շնորհ արտաքին՝ մանկական մեղոյշ ու ամենասիրուն հրապոյրներով , որոնց հանդէպ սքանչացում , հիացում և եթ կրյայտնէր բովանդակ Հրէաստան :

Այո՛, Յիսուս մանուկը կ՚աճէր ու կըզօրանար լի իմաստութեամբ , իր մայրը՝ Մարիամ , գիտէր թէ՝ ո՞վ էր Ան , և երբ անոր ֆիզիքական ու մտաւորական բարգաւաճմանը համար իր մայրական պարտականութիւնները լիովին կըկատարէր , չէր մոռնար իր գերագոյն պարտականութիւնն ալ՝ « հոգւով և ճշմարտութեամբ » երկրպագելու իր մնածին Որդւոյն՝ որ իր Արարիչն էր միանգամայն և Աստուածը :

Յիսուսի երեսնամեայ ծածկեալ այս կենցաղին մէջ սակայն՝ Սրբազան Աւետարանիչը կըյիշատակէ պարագայ մը՝ որ կենդանի լոյս մը կըսփռէ Յիսուսի մանկական կեանքին վրայ . — « Եւ երթային — կ՚ըսէ — ծնողքն նորա ամի ամի յԵրուսաղէմ ի տօն զատկին : Եւ իբրեւ եղեն նորա ամք երկոտասան , յելանել նոցա յԵրուսաղէմ ըստ սովորութեան տօնին ... մնաց Յիսուս մանուկն յԵրուսաղէմ » Ղ.-Ի . Ա. 41 , 42 , 43 :

Օրէնքին դրած գլխաւոր պատուէրներէն մէկն էր՝ Զատկի տօնին անպատճառ Երուսաղէմ երթալ : Յիսուսի ծնողքը ճշդիւ ու հաւատարմութեամբ կըկատարէին սոյն պարտականութիւնը և կանայք՝ թէպէտ ներկայ չէին գտնուեր սովորաբար , սակայն Մարիամ Յովսէփէն չէր զատուեր բնաւ : Օրէնքը նոյնպէս կըսահմանէր Իսրայէլացի տղու մը՝ տասներկու տարեկան հասակին մէջ հպատակել օրէնաց կրօնական Պարտականութեանը . — Տղայ մը երբ այդ տարիքը թեւակոխէր՝ Սինակոկան կըտարուէր՝ գլխուն վրայ դնելով այն նուիրական մագաղաթը՝ որուն վրայ գրուած էին աստուածային պատգամները , և այս օրէնքով՝ Իսրայէլի որդին, կըհռչակուէր նաեւ Օրինաց որդի՝ պատրաստ և նուիրական ի հնազանդութիւն :

Յիսուս ալ ճիշտ նոյն տարիքին մէջն էր՝ երբ իր ծնողացը հետ Երուսաղէմ գնաց՝ ազգային այդ մեծագոյն Տօնին ներկայ գտնուելու , և անտարակոյս , առաջին անգամն էր իր Երուսաղէմ երթալը՝ ուր իր կեանքին համար վախնալու բան մը չունէր բնաւ , որովհետեւ՝ երկու տարի առաջ , այսինքն , Հռովմայեցւոց 760 թուականին , Արքեղայոս ,

յաջորդն Հերովդեայ. ամբաստանուելով ընդհանուրէն իբրեւ բռնաւոր, դահիրնկէց եղած ու աքսորուած էր Օգոստոս Կեսարի ձեռամբ, և Յուդայի երկիրը Հռովմէական իշխանութեան տակ կը դտնուէր։

Երբ զատական ազնուական հօթնօրէքն աւարտեցաւ, Յովսէփ և Մարիամ պատրաստուեցան վերադառնալ Նազարէթ՝ իրենց հայրենակիցներուն հետ, բայց Աստուծոյ կամքն էր զանոնք ծանր փորձի մը ենթարկել։ Երբ Նազարէթի կարաւանը մեկնեցաւ՝ Յիսուս մանուկը Երուսաղէմ մնաց։ Մեկնելու սովորական չփոթութեան ու ժխորին մէջ՝ ուր հազարաւոր Գալիլեացիներ կային, Յիսուսի ծնողքը չի կրցան նշմարել թէ՝ իրենց Միածին մանուկը իրենց հետ չէ, թերեւս կարծեցին թէ՝ ուրիշ ազգականներու կամ բարեկամներու հետ է, ուստի շարունակելով «իբրեւ աւուր միոյ ճանապարհ», իրիկունը ազգականաց ու բարեկամաց քով փնտռեցին, բայց ի զուր, չդժբախտաբար ոչ ոք տեսած էր զՅիսուս։

Ահաւոր էր իրենց սարսափը՝ մանաւանդ որ Յուդայի դաւառը լի էր զանազան խռովութիւններով՝ որ կրնային մեծ վտանգ մը բերել անշուշտ կորսուած տղու մը գլխուն, ուստի անմիջապէս վերադարձան Երուսաղէմ, և սակայն՝ երկու օր երկու գիշեր ի դերև եւան իրենց հետաքնին խուզարկութիւնները։

«Եւ եղեւ յետ երից աւուրց, գտին զնա ի տաճարին զի նստէր ընդ վարդապետսն, լսէր ի նոցանէ և հարցանէր զնոսա։ Զարմանային ամենեքեան որ լսէին ի նմանէ, ընդ իմաստութիւն և ընդ պատասխանին նորա, և իբրեւ տեսին զնա՝ սքանչացան» (Ղուկ. Բ. 46, 47)։

Շաբաթ օրեր, Տաճարին արտաքին սրահներուն մէջ, Դպիրներ ու Փարիսեցիներ սովորութիւն ունէին հաւաքուելու և կրօնական խնդրոց վրայ վիճաբանելու։ Զատկի Տօնին մանաւանդ, ուր աշխարհի չորս կողմէն բոլոր Հրեայք Երուսաղէմ կը թափէին, անոնց քով կ'երթային՝ լսելու։ Աստուածային մանուկն ալ, առաջին օրէն, պարզ ունկնդիրներուն մէջ մտեր էր, սակայն իր հարցումները՝ իրենց պարզութեան մէջ խորիմաց, Դպրաց ու փարիսեցւոց ուշադրութիւնը գրաւեցին, յափշտակուեցան ի լուր այդ աստուածային մանկան ու բաղմեցուցին զՅիսուս իրենց միջև։ Ի՞նչ կը հարցներ այդ Երկոտասանամեայ մանուկն անոնց...

— Ս. Աւետարանը անյայտ կը թողու զայդ, բայց, հաւանօ-

րէն, ամէն հարցում Մեսիայի գալստեան մասին մարգարէից գուշակութեան վրայ կը դառնար։

Մարիամ և Յովսէփ երբոր տեսան զՅիսուս «սքանչացան», սքանչացան Յիսուսի կատարած գերին վրայ՝ Աստուծոյ տաճարին մէջ, ի մէջ օրինաց վարդապետներուն. սքանչացան, վասն զի մինչեւ ցայն վայր աստուածային Մանուկը ծածկած էր իր գերբնական իմաստութիւնը և սակայն նոյն օրը ինքզինքը կը յայտնէր իբրեւ գերագոյնն ի գիտութեան՝ Իսրայէլի վարդապետաց մէջ։ Բայց և այնպէս յուզուած մահկանացուներու բնական տագնապներով. մայրը կըսէ Յիսուսի — «Որդեակ, զի՞նչ գործ գործեցեր դու ընդ մեզ, ահաւասիկ հայր քո և ես տառապէաք խնդրէաք զքեզ»— ։ Եթէ ստգտանք մը ըն էր այս խօսքը՝ սակայն լի էր մայրական գորովով .... բայց ոչ, գորովալիր մօր մը խանդաղատական տրտունջն էր՝ որ վիշտ և ուրախութիւն միանգամայն կը-յայտնէր։ Յովսէփ, հոն, պատկառոտ լռութիւն մը կը-պահէ, բայց Մարիամ, իր մայրական իրաւունքով միայն, կը հարցնէ, կարծես սա խօսքերն են որ կը լսուին իր մայրական գորովախօս բերանէն — «Ահ, սիրուն Որդեակ, դուն՝ որ մինչեւ ցայսօր մեր ուրախութեանն ու երջան-կութեանը մշտնջենաւոր աղբիւրն եղար, ի՞նչպէս կրցար այսպիսի մոռատանջութիւն մը պատճառել մեզ, և ո՞վ պի-տի բացատրէ մեզ չարժառիթը քու այդ վարմունքիդ՝ որ անակնկալ մըն էր։ Յիսուս բաւական կը հարցի պատաս-խանել — «Զի՞ խնդրէիք զիս, ոչ գիտէիք եթէ ի տան Հօր իմոյ պարտ է ինձ լինել։» Այս պատասխանն ալ՝ Յիսուսի կողմէ ստգտանք մը չէր՝ այլ բուն իսկ բացատրութիւնն իր վարմունքին։ Ինչու կը փնտռէիք զիս, չէիք գիտեր որ վախնալու բան մը չունիմ, իմ երկնաւոր Հօրս պաշտպան-ութեանը տակ։ — Չէիք գիտեր որ իմ Հօրս տանը մէջ գտնուիլ հարկ էր ինձ, մոռցաք միթէ իմ աշխարհային կեան-քիս բուն չարժառիթը, ոչ ապաքէն իմ պաշտօնս է Հօրս կամքը միայն կատարել։ — Սքանչելի դաս մը՝ որով Մա-նուկն աստուածային թեթեւ կերպով մը կը պարզէ այն քօղը՝ որուն ներքեւ ծածկուած էր ապագան և կերպով մը կը թողու ամբիծ մօրը՝ ընդունմարելու իր որդւոյն բարձրա-

գոյն կեանքը և այն փորձութիւնները՝ որոնցմէ պիտի անցնէր։

Բայց Աւետարանը կը յաւելու թէ՝ ոչ Մարիամ և ոչ Յովսէփ «ոչ իմացան զբանն զոր խօսեցաւ ընդ նոսա» (Ղ-ԿԸ. 49)։ Անշուշտ ոչ թէ չէին հասկնար թէ՝ ո՞ր Հայրն էր՝ որուն կամքը պիտի գործադրէր, այլ թէ՝ ինչ էր Երկնաւոր Հօր աստուածային կամքը՝ որուն բովանդակապէս պիտի նուիրուէր իրենց սրտին Հատորը՝ իրենց միածինը, և չէին համարձակեր խնդրել որ բացատրէ։ Յարգանք մըն էր այս՝ զոր կրտածէին հանդէպ իրենց որդւոյ աստուածային Անձին։

Աւետարանի այս պատմութիւնը ծով մըն է՝ զոր չենք կրնար համառօտիւ բացատրել, բայց դէթ ամենակարեւորներն իրենց կարգաւը ծանօթացնենք մեր ընթերցողաց։

«Յիսուս զարգանայր իմաստութեամբ և հասակաւ» — կը-զարգանար ըստ մարմնոյ։ Զոհ մըն էր. Պատարագ մը՝ որ կ'աճէր՝ նուիրուելու ի փառս Հօր եւ ի փրկութիւն մեր, կը-զարգանար՝ մեր մեղքերու ծանրութիւնները կրելու համար, կը-զարգանար՝ որպէս գի սրբէ, մաքրէ ու քաւէ զանոնք ամենադառն փորձութեանց տակ մտնելով։ Իսկ մենք, քրիստոնեայքս, ոչ կ'աճինք, ոչ կը-զարգանանք եւ ոչ կը-զարգանանք Աստուծոյ սիրոյն ու պաշտամանը համար, այլ ընդհակառակը կը-զօրանանք եւ առաւել կը-զարգանանք ի մեղս եւ ի չարիս ընդդէմ աստուածային կամաց։ Կը-զարգանար Յիսուս մտօք, գիտութեամբ, իմաստութեամբ՝ իբրեւ տիպար մանկութեան, Նազարեթի մէջ, Յովսէփի խոնարհ յարկին տակ, իր ծնողաց հպատակութեան ներքեւ։ Սքանչելի օրինակ մըն է այս մեր ազգային մանկտւոյն ծնողաց՝ որոնք աւելի խնամք կը-տանին իրենց որդւոց արտաքին գիտութեանը՝ քան երբէք անոնց բարոյական, կրօնական եւ առաքինական զարգացմանը։ Ոհ, եւ որքան տղայք, տակաւին իրենց դատողութեանը տէր չ'եղած՝ կը-կորսնցնեն իրենց անմեղութիւնը, մոլեկան սովորութիւններով ... եւ ծնողք անտարբեր կը-գտնուին ...։

«Եւ երթային ծնողքն նորա ամի ամի յԵրուսաղէմ ի տօն զատկին» — Ահաւասիկ կրօնական պարտուց անթերի կատարման սքանչելի օրինակ մը։ Եթէ Աբրեղայոսի ազգած եր-

կիւղը կ'արգիլէր Յիսուսի ծնողաց Երուսաղէմի մէջ բնակելը Աստուծոյ երկիւղն ալ կ'արգիլէր անոնց՝ մեծ Տօներու ժամանակ, Նազարեթի մէջ մնալ. ուստի սովորութիւն ըրած էին իրենց՝ ամէն տարի Երուսաղէմ գալ այս մեծ Տօնին։

Մենք ալ հետեւինք Յովսեփի ու Մարիամի օրինակին, յարգենք մեր կիրակիներն ու տօնական օրերը, գիտնանք որ՝ եթէ մեր մարմինը հանգիստի պէտք ունի, մեր հոգին ալ կարօտն է միշտ հոգեւոր սնունդեան։ Ոհ, որքան մեծ պարտականութիւն կրծանրանայ, այս մասին մանաւանդ, բոլոր ծնողաց վրայ, վասն զի եթէ անոնք չի պահեն Աստուծոյ օրէնքը. ի զուր կ'աշխատին պահել տալու զայն իրենց որդւոց։

«Իբրեւ եղեն նորա (Յիսուսի) ամք երկոտասան, եւ յելանելն նոցա յԵրուսաղէմ ըստ սովորութեան տօնին...» — Յովսեփի եւ Մարիամի նման պարտաւոր են ծնողք իրենց զաւակները միշտ Եկեղեցի առաջնորդել, եւ, անոնց մանկական հասակէն, իրենց հետ տանիլ Աստուծոյ Տաճարը ամէն Եկեղեցական Տօներուն, ու ներշնչել անոնց սրտերուն մէջ՝ հանդէպ Կրօնի, պատկառանաց, բարեպաշտութեան, աղօթից և հաւատքի, յուսոյ և սիրոյ զգացումները։ Այս մտքով էր որ Յիսուս Մանուկը Տաճարը գնաց՝ զատիկը տօնելու, մինչդեռ ինքն էր ամենաճշմարիտ զատիկը՝ որ իր անձը կ'ընծայէր Հօր Աստուծոյ՝ իբրեւ անմեղ ու ամբիծ գառնուկ մը՝ որ հին պատարագներու ստուերին վրայ իր երկրպագելի Արեան սկնապարար լոյսը պիտի սփռէր Անձին զոհողութեամբ։

«Մնաց Յիսուս մանուկն յԵրուսաղէմ, և ոչ գիտացին ծնողքն նորա»։ — Յիսուս կրպահուի երբեմն նոյն իսկ ամենաբարեպաշտներէ՝ զանոնք փորձութեամբ սրբելու և փորձով սրվեցնելու համար անոնց թէ՝ պարտին միշտ Աստուծոյ ծառայել, ոչ թէ այն ամէն չնորհաց համար՝ զոր կ'ընդունին Անկէ, այլ զի՝ որովհետեւ Աստուած է։ Եւ որքան օգտակար են այդ փորձութիւններն եթէ սիրով հպատակինք անոնց։ Բայց շատ անգամ մեր մեղքերն են որ զՅիսուս մեզմէ կրծածկեն, և ինչ մեծ դժբախտութիւն՝ երբ Յիսուս հեռու է մեզմէ, Յիսուս՝ որ լոյս է, զորու-

թիւն է, կանանք է։ Մարիամ և Յովսէփ անմխիթար էին զՅիսուս հեռացած տեսնելով իրենցմէ, և սակայն արժանի էին զԱյն վերստին իրենց քով ունենալու, բայց քրիստոնեայ մը՝ որ զՅիսուս կըկորսնցնէ ու անփոյթ կըդտնուի, ինչպէս պիտի կրնայ գտնել անգամ մըն ալ . . . ։

«Իբրև ոչ գտին, դարձան անդրէն յԵրուսաղէմ խնդրել զնա»։ — Այս հետախուզութեան մէջ աշխատեցան իրենց բոլոր ուժովը, հոգւոյն ու սրտովը։ Այսպէս մենք ալ խնդրենք ու գտնենք Յիսուսը, չի ննջենք մեր մեղքերուն խոր քունին մէջ ընկղմելով, այլ արթնութեամբ հոկենք՝ որպէս զի ինքն Յիսուս՝ լուսատու ըլլայ մեզ։ Ինքը որքան հեռու ըլլայ մեզմէ, այնքան մեծ պէտք է ըլլայ մեր յոյսը՝ զինքը գտնելու համար։

«Յետ երից աւուրց գտին զնա ի Տաճարին». — Ինչու արդեօք Տաճարին մէջ և ոչ այլուր։ Աստուածային մանուկը միթէ չէր կարող ճամբուն վրայ պատահիլ իր ծնողացը. և կամ ուրիշ տեղ մը։ — Ոչ, զինքը գտնելու վայրը՝ Տաճարը ընտրեց, իր սիրած վայրն էր այն, իր երկնաւոր Հօրը Տաճարը, և այնու սորվեցուց նաև մեզ թէ՝ պէտք է միշտ սիրել Աստուծոյ Տունը՝ Եկեղեցին, ու հոն գտնել զինքը։

«Ոչ գիտէիք եթէ ի տան Հօր իմոյ պարտ է ինձ լինել». — Մանուկ Յիսուսի առաջին և սքանչելի խօսքը։ Ամէն բանէ առաջ՝ Աստուած՝ իր Հայրը՝ դեր ի վեր քան զամենայն։ Մենք ալ նոյնը ըսենք և նոյնը գործենք։ Ըսենք, «ի տան Հօր մերոյ պարտ է մեզ լինել» որպէս զի արժանի ըլլանք յաւետենական վարձուց ի հանդերձեալ կեանսն, յաւիտեանս յաւիտենից։

ՔԱՐՈԶ

(*Խօսեցեալ ի Զորրորդ Կիւրակէի զ՝նի Հոգեգալստեան յԱզգ. Եկեղեցւոջ Հայոց Մանչէսթրի։*)

„Զի որպէս էր Յովնան ի փոր կիտին զերիս տիւս եւ զերիս գիշերս, նոյնպէս եղիցի եւ Որդի Մարդոյ ի սիրտ երկրի զերիս տիւս եւ զերիս գիշերս։„ *Մտթ. ԺԲ. 40։*

Ասցեալ կիւրակի տեսանք թէ ինչպէս Փարիսեցիք առաքինութեան և օրինապահութեան կեղծաւորապատիր ձեւերով Քրիստոսի աշակերտներին՝ Շաբաթ օրն հասկ կորզելու և ուտելու համար կըմեղադրէին. տեսանք նաև թէ որպիսի՛ զօրաւոր փաստերով Քրիստոս ջրեց նոցա առարկութիւններն և ցոյց տուաւ որ ինքն և իւրայինք աւելի լաւ ըմբռնած էին՝ որպէս աստուածային այլ ամենայն օրէնքներ՝ նոյնպէս և Շաբաթ աւուր սուրբ պահելու օրէնք։ Այս աւուր Աւետարանի մէջ փարիսեական կեղծաւորութեան և խորամանգութեան մի ուրիշ օրինակ տրուած է. «Վարդապետ, կ՝ասեն փարիսեցիք և դպիրք, կամիմք նշան ինչ տեսանել ի քէն»։ Թեզմէ մի նշան կուզենք տեսնել որպէս զի կարենանք հաւատալ թէ դու յԱստուծոյ զրկուած ես և յաստուածակոյս կողմանէ կըխօսիս և կըգործես։ Մի նշան կ՝ուզեն, Փրկչի այն բոլոր հրաշքներն տեսնելէն վերջ, նորա սքանչելի ծնունդն, նորա հրաշափառ աստուածայայտնութիւնն Յորդանանու մէջ մկրտուելու մէջոցին, նորա դերբնական զօրութիւնն տեսնելէն և աստուածաշունչ քարոզութիւններն լսելէն վերջ՝ դարձեալ մի նշան կ՝ուզեն տեսնել։ Բայց արդէն այս նշան խնդրելն յայտնի ապացոյց էր որ փարիսեցիք ոչ կըհաւատային ի Քրիստոս ոչ ևս անոր հաւատալու դիտաւորութիւն ունէին, այլ պարզապէս ծաղրելու համար կամ մեղադրելու մի պատճառ գտնելու համար՝ այդ հարցումն կ՝առաջարկէին։ Ընդհանրապէս արտաքին կեղծաւորութիւն ունի իւր ընկեր ներքին թերահաւատութիւն. արտաքուստ վերին աստիճանի ուղղափառ և օրինապահ կըձեւանան, շատ բծախնդիր են սահմանաչնչին իրերի մէջ, ճշմարտութիւնն մինչև յետին կէտն ստուգելու և քննելու ցոյցեր կ՝անեն, դատ կըբանան, վիճաբանութեան մէջ կըմտնեն ասոր անոր կըդատապարտեն, բայց ի ներքուստ հպարտութեամբ և թերահաւատութեամբ

լի են, և այդ արտաքին ցոյցերն ժամավաճառ լինելու և իւրեանց ցուցամոլ հպարտութեան տմնչանքն հաղեցնելու պատրուակ են։ Խոնարհ հաւատացեալն այլոց՝ բարի յատկութիւններն կըտեսնէ, իսկ իւր՝ մեղքերն միայն. նա գիտէ որ ուրիշների դէշ ընթացքն իրեն որեւէ օգուտ չի կարող բերել, այլ կարող է մինչեւ իսկ վնասել. նա գիտէ որ ուրիշների բարի յատկութիւններն միայն կարող են նմա բարի օրինակ լինել. իսկ իւր թերութեանց և զանցառութեանց վերայ յաճախ խորհրդածելն կարող է նմա օգտակար լինել։ Սակայն Փարիսեցւոց պրութիւնն սորա հակառակն էր. նոքա իւրեանց փրկութեան վերայ կատարեալ վստահութիւն ունին. կ'ուզեն տեսնել ուրիշներ ի՛նչպէս են, կըսիրեն յաճախ ուրիշներին մեղադրել և դատապարտել։ Այս մտքով և այս զգացմամբ է որ նոքա այս անգամ Յիսուսին կըմերձենան և նշան կըխնդրեն։ Քրիստոս կըյանդիմանէ զանոնք և կ'ասէ. Ձեզ ուրիշ նշան չի տրուիր բայց եթէ Յովնան մարգարէի նշանն. ինչպէս Յովնան մարգարէ կէտի փորին մէջ երեք օր մնաց, նոյնպէս և ինքն գերեզմանի մէջ պիտի մնայ երեք օր։ Յովնան մարգարէ Ասսուրմէ պատուէր ստացած էր գնալ ի Նինուէ և այդ մեծ քաղաքի ամբարիշտ ժողովրդեան ապաշխարութիւն քարոզելով՝ ասել որ եթէ իւրեանց վարքն չ'ուղղեն՝ երեք աւուր մէջ ամբողջ քաղաքն պիտի կործանուի։ Սակայն Յովնան չուզեց գնալ, այլ նաւ մտնելով մի ուրիշ երկիր կըփախչէր երբ մի սաստիկ ալէկոծութեան պատճառաւ յայտնուեցաւ միւս նաւարկեալներին Յովնանու Աստուծոյ դէմ դրած լինելն, ուստի զայն բռնեցին ծովը գցեցին։ Սակայն մի մեծ ձուկն կամ կէտ գնա կըլանեց և երեք օրէն յետ ցամաքի վերայ դուրս թողեց գնա։ Այս է Հին կտակարանի մէջ պատմուած պարզ պատմութիւն զոր Քրիստոս իբրեւ նշան կըտայ, կէս յեղնութեամբ կէս ցասմամբ, թերահաւատ և ընդվզողաքներին փարիսեցիներին։ Մի նշան կըտայ որ աւելի անոնց դատապարտութեան նշան է քան թէ անոնց գոհացնելու կամ մխիթարելու։ Ինչպէս Յովնան յետ երեքօրեայ արգելանաց ի փորի կիտին՝ ելաւ և Նինուէացւոց ամբարշտութեան դէմ քարոզեց եւ այդ մեծ քաղաքի մօտալուտ կործանումն գուշակեց, որ պիտի կատարուէր անշուշտ եթէ Նինուէացիք չապաշխարէին նոյնպէս Քրիստոս զինի երեքօրեայ թաղման պիտի յարութիւն առնէ ի մեռելոց. եւ այդ կըլինին Հրէից երկրի եւ ազգութեան կործանումն եւ փարիսեց-

ւոց մնոտի յոյսերի եւ ակնկալութեանց ջնջումն։ Սակայն մի մեծ տարբերութիւն կայ ի մէջ Հրէից եւ Նինուէացւոց զոր Քրիստոս յատկապէս յերեւան կբերանէ։ Յովնանու քարոզութեամբն Նինուէացիք դարձան եւ ապաշխարեցին եւ իւրեանց անձերն ու իւրեանց մեծ քաղաքն կործանումէ ազատեցին, բայց չնայելով որ Հրեայք ունէին իւրեանց մէջ մէկն որ Յովնանէն շատ աւելի մեծ էր, Քրիստոսն Որդի Աստուծոյ, որ անդադար կըզգուշացնէր Հրէաներին, անդադար կըգուշակէր այդ երկրի եւ այդ ժողովրդեան կործանումն, եթէ չ'ապաշխարեն, դարձեալ անհոգ ու անտարբեր, դարձեալ թերահաւատ ու ամբարիշտ էին եւ իւրեանց ընթանցքն ուղղելու կամ բարւոքելու որեւէ փոյթ չունէին։

Արդ, հաւատացեալ եղբարք ի Քրիստոս, այս աւուր Աւետարանի խօսքերէն օգուտ քաղելով՝ քննենք եւ մեզէն հարցնենք թէ արդեօք մեր սիրտերու մէջ եւս ունի՞նք փարիսեական կեղծաւորութեան արատներ, թէ արդեօք մեր մէջ եւս կա՞ն այնպիսիներ որ չնայելով Աւետարանի ընդհանրական զօրութեան եւ ազդեցութեան, չնայելով Հայաստանեայց Եկեղեցւոյ դարաւոր նշաններին եւ ապացոյցներին, դարձեալ թերեւամտութեամբ եւ փարիսեական ունայնասիրութեամբ նշան կըխնդրեն, չեն ուզեր հաւատալ մինչեւ իրենց խելքի ու մտաց համաձայն ապացոյց չգտնեն, ոչ եւս փոյթ կըտանին այդ ապացոյցներն գտանելու, այդ նշաններն տեսնելու։ Այդպիսիներ ըստ մեծի մասին թերահաւատ են, , այլ ոչ թէ բանականութեամբ եւ խոհուն խորհրդածութեամբ զննելով չեն կրնար համոզուել թէ քրիստոնէական վարդապետութիւնք ճշմարիտ են, այլ որովհետեւ կըտեսնեն որ կրօնական պարտաւորութիւններէ փախուստ տալու, ամբարիշտ կեանք վարելու, անիրաւութեան եւ ամենատեսակ չարութեանց մէջ յղփանալու ամենալաւ պատրուակն է ասել. չեմ հաւատար, ապացոյց կուզեմ, նշան կուզեմ, եւ այլ այսպիսի բարբաջանք։ Իրականութիւնն այն է որ մեր ժամանակակից Փարիսեցիք, նման իրենց հին նախորդներին, չեն ուզեր Յիսուսի քաղցր լծոյ տակ մտնել եւ նորա Աւետարանի կենսաբեր հրահանգներին խոնարհել. նոքա կուզին անկախ լինել, անտարբեր ապրել, եւ ինչ որ մարմնոյն հաճոյք կըպատճառէ՝ միայն զայն գնել, առանց փոյթ տանելու թէ ի՞նչ գին կըվճարեն, թէ ինչ բարձր սկզբունքներ, ինչ յաւիտենական բարիք-

ներ կը զոհեն իւրեանց այդ մնոսի հաճոյից համար։ Նոքա կ'ուզեն իրենց կարծեօք ազատ կեանք վարել՝ կրօնական կապերով ու կանոններով չկապուիլ, նոքա կ'ուզեն սանձարձակ ամէն տեսակ ամբարշտութիւն գործել, մեղաց մէջ թաւալիլ, եւ յետոյ իրենց խղճի խայթն մի կերպիւ ամոքել՝ ասելով թէ. ճշմարիտ չէ, սատան չէ, չեմ հաւատար, նշան կուզեմ։ Բայց այսպիսիք փոխանակ աղատութիւն վայելելու՝ առաւել ևս դերութեան մէջ և ճնշման ներքոյ կը ձգեն ինքզինքնին, Աստուծոյ որդեղիր դառնալէ, աստ յայտմ աշխարհի հոգեւոր սփոփանք և մխիթարութիւն վայելելէ և յաւիտենական երանութիւններէ կը հրաժարին և յանձն կառնուն սատանային ծառայ դառնալ, աշխարհիս մնոտի հոգսերի մէջ խորասուզուիլ և վհատութեան ներքոյ ճնշուիլ՝ առանց հանդերձեալ կենաց բարեաց յուսոյն մխիթարուելու։ Ներկայ դարուս անտարբերութեան և թերահաւատութեան զաւակաց վիճակն լաւ կը ընկարագրէ այս աւուր կարդացուած Եսայեայ մարգարէութիւն. — «Արծաթ ձեր անփոյծ, վաճառականք ձեր խառնեն ջուր ընդ գինի, իշխանք ձեր ապստամբք՝ գողակիցք են գողոց. սիրեն զկաշառս, վրիժագործք. որբոց իրաւունս ոչ առնեն, և դատաստանի այրեաց ունկն ոչ դնեն։» Այսպիսի խարդախ ու անիրաւ ձգտումներ ունենալն է որ կը դրդէ ներկայ դարուս փարիսեցիներին մի կերպով ինքզինքնին մխիթարել թէ պատասխանատուութիւն պահանջող չկայ, թէ իւրեանց սրտերի խորին խարդախութիւն և չարութիւն տեսնող չկայ. քանզի կարելի չէ և՛ այսպիսի խարդախ և ամբարիշտ վարք ունենալ և՛ միանգամայն Աստուծոյ ծառայ լինել ոչ ոք կարէ երկուց տերանց ծառայել։

Միամիտ սրտիւ և փոյթեռանդն հաւատով խնդրենք յԱստուծոյ որ մեզմէ հեռու պահէ այսպիսի թերահաւատութիւն, մեր սրտերէն արմատախիլ առնէ անտարբերութեան հետքեր, եթէ գտնուին։ Մեզ 1900 տարուայ քրիստոնէիցս համար շատ ուշ է և բոլորովին անտեղի նոր նշան խնդրել Քրիստոսէն։ Ի՞նչ բանի համար պէտք է նշան խնդրենք, ինչ բանի վերայ պէտք է տարակուսինք որ այժմ մի սոսկ նշանով կուզենք մեր երկմտութիւնն փարատիլ։ Արդեօք կը տարակուսի՞նք այն սուրբ կրօնի վերայ զոր մեր Սուրբ Գրիգոր պատուական հայրապետն հնգետասանամեայ անտանելի չարչարանօք մեր Հայրենեաց մէջ հաստատեց, կը տարակուսի՞նք այն կրօնի վերայ որոյ համար մեր նախնիք իրենցմէ շատ աւելի զօրաւոր թշնամիներու դէմ դրին, որոյ հա-

մար Հռիփսիմեան սուրբ կուսանք զոհուեցան, որոյ համար Վարդանանց քաջամարտիկ խումբն Պարսից հզօր պետութեան դէմ նահատակեցաւ. կըտարակուսի՞նք այն սուրբ կրօնի վերայ զոր մեր ազգն հազարաւոր և միլիոնաւոր հայերի արեամբ գներ և իւրացուցեր է, այն կրօնն որում մինչ ցարդ ևս հազարաւոր զոհեր կընուիրէ։ Ասոնցմէ աւելի ի՞նչ մեծ նշան կ'ուզենք։ Միթէ կարելի՞ է մեզ համար այլ ևս տարակուսանօք եւ ակսկածանօք նայիլ այն սրբութեանց վերայ զոր մենք այնպիսի սուղ գնով գնած ենք։

Ո՛չ, եղբարք, մեզ նշան պէտք չէ, մենք արդէն շատ նշաններ ունինք. մերձենանք այդ նշաններին, առնենք զնենք, անոնցմէ օգտուինք։ Քիչ նշան է որ սուրբ աւազանի ջրոյ լուացմանէն Աստուծոյ որդեգիր կըդառնամք. քի՞չ նշան է որ հայի եւ գինւոյ տեսակաւն Քրիստոսի սրբարար մարմնոյ եւ արեան հաղորդ կըլլինիմք, քի՞չ նշան է որ քահանայի եւ եպիսկոպոսի ձեռնադրութեամբ մեր մեղաց թողութիւն կըպարգեւուի մեզ, բազմատեսակ շնորհաց եւ աստուածային օրհնութեանց կ'արժանանամք, մեր այս աշխարհային վիշտերու մէջ հոգեւոր սփոփանք կըգտնենք եւ յաւիտենական երանութեանց յուսոյն կըմխիթարուինք։

Ուստի աղաչեմ զձեզ եղբարք, այսպիսի թանդ գնով ձեռք բերած շնորհներն առանց վայելելու մի թողուք. աշխատեցէք իւրացնել, պիտոյացնել այն պատուական ակունքն որ ձեզ շնորհուած են այս սուրբ Եկեղեցւոյ միջոցաւ. Եկեղեցին չպիտի իբրեւ մի սոսկ հանդիսարան նկատէք եւ շաբաթին մի անգամ դաք ներկայանաք առանց շատ օգուտներ տանելու ձեզ հետ. սխալ է այն գաղափարն թէ աղօթելն, պատարագ մատուցանելն միայն քահանային կըվերաբերի, իբր թէ քահանայն է միակ միջնորդ ի մէջ Աստուծոյ եւ մարդկան. արդարեւ այսպէս էր ի հնումն՝ Հրէից մէջ. բայց անցաւ այն դարն. այժմ երկնից արքայութեան դռներն բաց են ամէն հաւատացեալ քրիստոնէի համար։ Մեր ներկայ քահանայն ոչ այլ ինչ է բայց միայն առաջնորդ ժողովրդեան, իսկ աղօթողն՝ պատարագ մատուցանողն՝ ամբողջ ժողովուրդն է որ բարեկարգութեան համար քահանայի առաջնորդութեամբ իւր աղօթներն կըմատուցանէ. շատ սխալ է երբ ոմանք կ'ասեն մենք կ'ուզենք պատարագ տեսնել. ո՛չ այդպէս մի՛ ասէք, այլ ասէք մենք կուզենք պատարագ մատուցանել, հարկաւ քահանայի առաջնորդութեամբ։ Ձեզմէ իւրաքանչիւր մին պէտք է այնպիսի եռանդեամբ

մանակցի սրբազան պաշտամանց եւ Ս. Պատարագի իբր թէ ինքն իրապէս քահանայ է։ Աղաչեմ, կարդացէք այդ բոլոր աղօթքներն եւ մաղթանքներն ու շարականներն, եւ կը տեսնէք ամէն ինչ համայն ժողովրդի բերանովն է ասուած։ [Նախկին դարերու մէջ որպէս եւ այժմ այնպիսի տեղեր ուր քրիստոնէական ոգին տակաւին իւր նախկին ջերմութեամբն կը փայլի՝ ժողովուրդն կրօնական պաշտամանց կանոնաւորապէս եւ ստէպ կը մասնակցի։] Եթէ աղօթքներն միայն քահանայի համար յատկացեալ լինէին, հրապարակաւ յունկն ժողովրդեան աղօթելու հարկ չէր լիներ. նա կարող կը լինէր իւր տան մէջ կամ եկեղեցւոյ մէջ եւս առանձնացեալ կամ Հրէից քահանայից պէս ընդ վարագուրաւ աղօթել։ Նոյնպէս պատարագի սուրբ խորհուրդն ամբողջ ժողովրդեան կողմանէ կը մատուցուի եւ Եկեղեցին կը պահանջէ որ բոլոր ժողովուրդն ի միասին հաղորդուին. այնքան խիստ էր այս օրէնք որ մինչեւ ցարդ մնացած է մեր արարողութեանց մէջ սարկաւագի հրահանգն. «Եւ որք ոչ էք կարող հաղորդիլ աստուածային խորհրդոյս առ դրունս ելէք և աղօթեցէք։» Չհաղորդուողներին արգելուած էր և մինչև ցայսօր կարդիլուի՝ Ս. Պատարագի ժամանակ եկեղեցւոյ մէջ մնալ. սակայն հակառակ այդ հրամանի մեր ներկայ թշուառացեալ ժամանակին մէջ կը տեսնենք կիւրակին կիւրակէի կ'անցնի, Հայաստանեայց Եկեղեցեաց մէջ Ս. Պատարագ կը մատուցուի, սակայն միակ հաղորդուողն քահանայն է։

Հայաստանեայց Եկեղեցւոյ մեծ տօներէն կամ տաղաւարներէն մին պիտի երեք շաբաթէն վերջ կատարենք. այն է Վարդավառի կամ Քրիստոսի այլակերպութեան սուրբ տօնն։ Կուզեմ այժմէն ձեր ուշադրութիւնն դարձնել այդ մեծ տօնին և խնդրել ձեզմէ որ գոնէ այդ հրաշալի աւուր մէջ այս սուրբ սեղանի առաջ դիս միայնակ չթողուք։ Սորա համար մտադիր եմ Աստուծոյ ողորմութեամբ յաջորդ երկու կիւրակի օրերն բացատրել ձեզ ապաշխարութեան և Ս. Հաղորդութեան խորհրդոց վարդապետութիւն և նշանակութիւն. գիտեմ շատեր մեր ազգայիններէն (խօսքս միայն այս քաղաքի գաղթականութեան համար չէ) պատճառ կը բռնին թէ ինչ օգուտ ունի եկեղեցի գալն երբ այդ արարողութիւններն մենք չենք հասկանար, և իրենց անտարբերութեան հետեւանքի պատասխանատուութենէն կուզեն մի կերպով զերծանել, նման այնպիսիներին որք իրենց անվստահութիւն ի Քրիստոս կը վերագրէին այն հանգամանքին որ իրենց ուղած նշանը չէին

տեսներ և Փրկչին կասէին «կամիմք նշան ինչ տեսանել ի քէն։» Եթէ կան ձեր ծանօթների մէջ այդպիսի նշանախնդիր մարդիկ որ այդպիսի սնոտի պատճառներով իրենց կրօնական պարտաւորութեանց մէջ թերի կըգտնուին և չեն յաճախեր այս սուրբ Տաճարն, կըխնդրեմ ձեզմէ որ զանոնք ստիպէք յաջորդ երկու կիրակի օրերն ձեզ հետ գան և լսեն այն ահաւոր խորհրդոց բացատրութիւն զոր իմ նուիրական պարտաւորութիւնն է տալ ձեզ այս սուրբ բեմէն։ Գուցէ երկմիտներ և թերահաւատներ (եթէ կան ձեր մէջ) գտնեն այն նշանն, այն զոր կուզեն տեսնել Քրիստոսէն, իսկ դաղջ և անտարբեր հոգիներ աւելի եռանդ և հոգեւոր զօրութիւն ստանան ի փրկութիւն հոգւոց իւրեանց, ի լրումն արքայութեան երկնից և ի փառս Ամենակալին, որում վայելէ իշխանութիւն և պատիւ այժմ և յաւիտեան. Ամէն։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ Կ. ՊՕԼՍԱՆ

Գրաղուած ի Նամակէ Աւժ. Տէր Յովհաննէս Աւագ Քահանայի Մկրեան։

Սիրելեալ Եղբայր ի Քրիստոս,

. . . . . .

Ահա քեզ պատճառք իմ, Եղբայր սիրելի, ուր թողից և զներքին խոց և զանհնարին ցաւ սրտիս, ի վերայ հոգեկան և մարմնական կացութեան Եկեղեցւոյս մերոյ Հայաստանեայց. զի աշխարհին իւրով անհաւատութեամբ և անկրօնութեամբ յարձակի ընդդէմ Եկեղեցւոյ և հայհոյէ զնա՝ լրբաբար ձեւացուցեալ զինքն իբրև սիրող և յարգող Եկեղեցւոյ, և Հոգեւոր իշխանութիւնն ոչինչ կարէ

կամ կամի առնել։ Ծաղրուածանակ լինին պաշտօնեայք Եկեղեցւոյ առ հասարակ, ոչինչ խոսիր եղեալ ընդ չորն և ընդ դալարն, և ոչ ոք է որ պաշտպանէ զնոսա, և կամ դատապարտէ։

Անտանելի տգիտութիւն և ցոփութիւն քահանայից ամուսնացելոց և կուսակրօն անուանելոց, ամօթապարտ ստանին զարբութիւն Եկեղեցւոյ Հայաստանեայց. մանաւանդ յայտնի, համարձակ լրբութիւն խենէշութիւն և կնամոլութիւն կուսակրօնիցդ՝ անցեալ զանցեալ քան զչափն՝ մոլորեցուցիչք եղեալ են անմեղ հոգւոց, և գայթակղութիւն հասարակաց։ Եւ սակայն ոչ գոյ հոգեւոր իշխանութիւն, զի դատեսցէ զսոսա հրապարակաւ կամ լռելեայն։ Եւ չարագոյն է տեսանել զի կուսակրօնդ այդ՝ զեպիսկոպոսութիւն իւր կամ զվարդապետական աստիճան, զրահ պաշտպանութեան մոլութեանց իւրոց արարեալ, յԵկեղեցւոջ զքարոզ առաքինութեան խօսի (որպէս թէ՞)և արտաքոյ ի տան սեղեսի իւրում մոլեգնի։ Եւ զայս ամենայն տեսանէ ժողովուրդն, և զայսոսիկ լսէ հոգեւոր իշխանութիւնն, և ոչինչ կարէ առնել. այլ ի պատուի ունի, և հրամայէ զպատարագի զսուրբ խորհուրդն մատուցանել ասա և՝ անդ, և Սրբազան և Հայր Սուրբ անուանել։

Այսոքիկ ամենայն կարեվէր ցաւք են սրտի իմում, եւ տակաւին հարցանես ինձ թէ՝ Զի՞նչ են կարծիք Ձեր ի մասին կուսակրօնութեան եւ ամուսնութեան եկեղեցականաց։ Ահա՛ նշանակեցի զկարծիս իմ. աւելորդ համարիմ դեռ զայդ առաւել ինչ ասել ... ի զո՛ւր։

. . . . . .

Իսկ Դուք, անվրդով եւ վստահ եղեալ ի բարեկամութիւն իմ եւ ի սէր Ձեր, ընկալարուք զհամբոյր սրտի.

Եղբայրակցիդ՝ ՅՈՎՀ. ՔՀ. ՄԿՐԵԱՆ

Կ. Պոլիս, 29 - 11 Սեպտեմբեր, 1901.

ՆԱՄԱԿ ՀՆԴԿԱՍՏԱՆԷՆ

Հայր Պատուական,

Ի Թիւ 16 (Յունիս) Հայ-Եկեղեցի կրօնաթերթի կարդացի համաձուԹեամբ զԹարգմանուԹիւն քարոզին խօսեցելոյ Անգլիական Ս. Ստեփաննոս Եկեղեցւոջ Կալկաթու իբր հնգետասան ամաց յառաջ, յաւուրս նուիրակուԹեան Տեառն Մկրտչի Եպիսկոպոսին Կիլիկիոյ։

Բազմահմուտ Անգլիացի Քահանայն Հայասէր՝ խօսելով զսիրալիր յարաբերուԹենէ հոգեւորականացն մերոց ընդ պաշտօնեայսն Անգլիական Եկեղեցւոյն ի զանազան տեղիս, յիշէ ի միջի այլոց և զԵպիսկոպոսն քաղաքին, զմիլման, որ ասէ «ամենաջերմ բարեկամուԹիւն պահել» ընդ Թեմական քահանայսն Նաղարեթայ Սուրբ Եկեղեցւոյն մերոյ անդ, այլ սակայն զարմանամ զի քարոզիչն այն խորին հմտուԹեամբն հանդերձ, իսպառ զանց առնէ յիշատակել ի քարոզի իւրում զյաւէտ յիշատակս արժանին զՌեջինալտ Հիբր՝ երկրորդ Անգլիական Եպիսկոպոսն Կալկաթայի, որոյ անհուն սէր և համակրուԹիւն առ ազգ մեր և Եկեղեցին Սուրբ անզուգական էր արդարև, և բազում գովեստից արժանի։ Բանիս Թող վկայ լիցին հիմնաւոր (ձրիավարժ) հայազգի պատանիք, որք ի 1826 ամէն հետէ աշակերտեցան յԵպիսկոպոսականն անուանեալ ճեմարանին քաղաքիս, անմահ քերԹողն Թադիադեան դոլով առաջին հայազգին որ ընկալեալ եղեւ յաշակերտուԹիւն ճեմարանիս առ կենդանուԹեամբ երջանկայիշատակ Եպիսկոպոսին Ռեջինալդայ. (*) յաչս որոյ սիրելի գտաւ գրասէր և ուսումնասէր Թադիադեան սարկաւագն սրբոյ էջմիածնի, որ եկեալն էր ի Հինդ ի խնդիր ուսմանց և գիտուԹեանց։

Զամենայն աւուրս բազմարկածեանս և աստանդական կենացն, անմահն Թադիադեան պաշտէր զինկելի յիշատակ իւրոյ բարերարին. զի ի շնորհս անքաւ երախտեաց նորին կարաց զպաքեալ անդաստան մտացն բեղմնաւոր առնել։

Յամին 1830, ի նշան երախտագիտուԹեան, Թադիադեան Թարգմանեալ հայերէն զՊաղեստին քերԹուածն Հիբր Եպիսկոպոսին ի լոյս ընծայեաց ի տպարանէ անտի Եպիսկոպոսական ճեմարանին, ուր և ի նախորդ տարւոջն հրատարակեալն էր զՀոգեշահ Մատեանն Հուգոնի Գրոտեայ ձշմարտուԹիւն քրիստոսական հաւատոյ, զոր ի լատինէ ածեալն էր ի հայ, և նուիրեալ «պայծառափայլ ասպետացն ՍէԹայ և Գրիգորի Սամեան» որք անդ ի Մադրաս։

«Պաղեստին» Մատենիկն հաղուագիւտ ունի յառաջաբան իմն կարի հետաքրքրական, յորում Թարգմանիչն ոսկեգրիչ սքանչելի հայ-

(*) Ի նամակի իւրում առ Ատենադպիր Աւետարանական ընկերուԹեանն Անգլիոյ, Ռեջինալտ Հիբր գրելով զլենդունելուԹենէ Մեսրովբայ Թադիադեան յԵպիսկոպոսական ճեմարան իւրեանց յուսումն անգլիացի եւ արեւմտեան դպրուԹեանց, միանգամայն կոչէ զնա «պատանի ոմն հաճոյական»։

կաբանութեամբ ճառէ զսիրոյ և զսիրաղեղուն յարաբերութենէ և զհաղորդակցութենէ Տեառն Ռէջինալտայ Հիբբ Եպիսկոպոսին Անգլիացւոց ընդ Նուիրակն Մայր Աթոռոյն Հայոց Ս. Երուսաղէմի. որք էին Նախջուանցի Պողոս Եպիսկոպոս Սրբոյ Էջմիածնի, և Բիւրականցի Աբրահամ Ծայրագոյն վարդապետ Երուսաղէմի:

Արդ յամին 1824, Հիբբ Եպիսկոպոս գնայ ի Դաքա ուր դեղերէին յիշեալ Նուիրակնք մեր, որոց լուեալ զգալստենէ նորին անդր, գնան ամիջապէս յողջոյն յարգանաց նորա և ըստ գրութեան Թաղիադեանի «սիրով ընկալեալ պատուեցան ի նմանէ իբրև գործակիցս Աւետարանի Տեառն՝ և զուգապատիւ եղբարս ի Քրիստոս»:

Յետ առաքելական քարոզութեանն ի զանազան կողմանս Հնդկաց աշխարհին, դարձ առնէ Ռէջինալտ Հիբբ յիւր աթոռանիստն ի Կալկաթա ի վերջ կոյս 1825 ամին, յորժամ և Տէր Աբրահամ Ծայրագոյն վարդապետն Ս. Երուսաղէմի որ իջեալ ի Դաքայէ դեղերէրն ասամ, գնայ յայց նորին, որ ըստ վկայութեան Թաղիադեանի «եցոյց նմա զամենայն պարտ ու պատշաճ մեծարանս ըստ արժանի կարգին սրբութեան»:

Ըստ որում յոյժ հետաքրքրաշարժ և շահեկան իսկ են անցք փոխադարձ այցելութեանցն Տեարց Աբրահամու և Ռէջինալտայ, ուստի աւելորդ չհամարիմ դաղափարել ասատնօր ի յառաջաբանէ «Պաղեստին» քերթուածոյն, հատուածս ինչ ի գրութեանց Թաղիադեանի, որ անցիցն գոլով ականատես դրէ օրինակ զայս: —

«Հրաւիրեաց զնա և նուիրակ մեր հանդերձ ուխտիւ եկեղեցւոյն ի տուն Տեառն Յովսեփայ Ծերունազարդ երիցապետի մերում, ոյր նախ քան զմարմնոյն պարուրել զախորժանս՝ զհոգւոյն կամելով լնուլ զփափաք էջ ի սուրբ Նազարէթ եկեղեցի մեր, և կացեալ յանկեան ուրեք ակնածու պարկեշտութեամբ բուրէր ի վեր խունկս աղօթից, և ի կոչել զնա Տեառն Աբրահամու ի դասս հրեշտակաց տաճարին, բարեպաշտն իմն երկիւղածութեամբ պատասխանի զայս առնէր. Զգեստք կանոնաւոյ չեն առ իս, և ահ է ինձ մատչել ի սեղան Տեառն հասարակաց հաղուստիւ: Ո՛վ զարմանաւոր պարպարկեշտութեանս որ յաւէտ անդստին իմն երեւէր բնաւորութեան երանելւոյս քան թէ երեւութական արուեստին առաջօք հնար:»

«Ապա ի լինել ընթրեացն, առեալ Տեառն Ռէջինալտայ զբաժակն ի կեանս երեք երանեան հայրապետի մերում Տ.Տ.Եփրեմայ և առաջարկեաց, ցայս նիշ օր, ասէ, տանէ եկեղեցի Անգլիացւոց զսոն յիշատակի սրբազան առաքելոյն Թովմայ, և իմ եղեալ է ի մտի ձեռնադրել քահանայս. եթէ չիցէ հակառակ կանոնաց եկեղեցւոյ քում, և հաճիցես ընդ իս միասնաբար ձեռն դնել ի վերայ, գոհ եղէց զՁենէ:» Անբռնադատ խղճիւ ընկալաւ զայս Աբրահամ վարդապետ, և ի դոլ աւուրն նշանելոյ առեալ ընդ իւր զարժանապատիւ աւագերէց մեր և զՏէր Յովսէփ Ստեփաննոսեան,

զպարոն կարապետ ցակոբեան և զիս ինքն, գնաց առաջնորդարան եկեղեցի նոցա: Անդ առ դրամբ խորանին փիլոնեալ հարցն՝ մտաք ի ներքս. զեպիսկոպոսն և զուխտ երիցանցն ընդ նմա՝ զգեստաւորեալ համակ սպիտակափառ մաքուր կտաւեօք, և երիզ սեաւ ուրուրանման կախեալ զպարանոցէ իւրաքանչիւրոցն: Իբրեւ լուեաց երկարահար կանչիւն զանգացն, յարեաւ երգէհոն հոգեհնչիւն յոխորտալ անոյշ իմն ներդաշնակութեամբ՝ շարժել զժողովուրդն ի ջերմեռանդութիւն:

Ցայնժամ ելանէր ի խորանէն երանելին խոնարհութիւն, յաջմէ ունելով զՀայր Աբրահամ, յառաջնմէ նոցա գնայ այր կիսավիթխարի, որ ի ձեռին կրէր մանկան ձողաբարձ. և ի զարգանդհոս դիմաց անտի ահուր արկանէր մանաւանդ ի սիրտս եկաց, և զհետ նոցա դաս դաս երիցանց կարգաւ: Իբրև բազմեցան, ո՛վ զարմանացս, տեսի՝ զի եպիսկոպոսուհին Ռեջինալտայ նստաւ ի շարս քահանայից և բովանդակ ժողովուրդն արք ընդ կանայս խառն ի միասին նստէին:

Լուեաց երգէհոն, լուութիւն համատարած թագաւորեաց յեկեղեցի անդ, մի յերիցանց անտի ել յամբիոնն, և դպրին կացեալ ի խոնարհ սկսան զժամն: Ապա առեալ եպիսկոպոսին զնուիրակ մեր գնաց ի սեղան անդր առանց ծիսական իմն պաճուճանաց, և բազմեցան այր յաթոռ իւրում. առաջեաւ կացին նուիրեալք որոց մի էր Աբդուլմսիհ յայլադաւան աղանդոյ դարձեալ ի հաւատս կենդանի, այր հզօր բանիւ և գրով, և արհիսարկաւաղն՝ զխարտաֆիլակի ընդոյր զպաշտօն, յետ բազում հարցից և փորձից, և զնից և քնից, և աղօթից և երգոց, խմբեցան կացին շուրջ զսեղանովն երիցունք նոցա. ընդ որս և մեր Աւագերէց, և իբրև եպիսկոպոսն և Հայր Աբրահամ ձեռս (*) եդին ի վերայ նուիրելոցն. զնոյն արարին և եբիցունքն, և աղօթս արարեալ քահանայացուցին զնոսա Քրիստոսի և Աստուծոյ Հօր նորա: »

« Այս հանդէս փառաց կարի հախնական առաքելական նոր սքանչելեօք գոհ դու, զարմացոյց զկալկաթա համայն: Այս հոռանշան Սէր Աստուածաւանդ Միաբանութեան, շինէր զմարդիկ տաճար տեղչալի սուրբ երրորդութեան. որով և ազգացս իւրաքանչիւրոց մի հոգի մի բան գետօրէն զեղոյր առ Աստուած սիրոյ անհուն ովկիան, ոչ Անգլիանալ և ոչ Հայանալ ուր ոչ էր արժան, այլ գնել ի սիրտ սէր զթագն ասեմ Աստուածպաշտութեան: Մինչչեւ աւարտեալ գլխովին կարգի ձեռնադրութեանն ահա շնորհն սատիկ դղրդեաց զեկեղեցին. կէսք ի ժողովրդենէն յարեան և նստան. և

(*) Անգլիացիք մրուոն չունին, եւ ոչ զօծումն իւղով:

(*) Սովորութիւն է առ սոսա անհաղորդելեացն չմնալ յեկեղեցւոջ ի ժամ Սրբոյ Պատարագին:

կէսք ելին և գնացին (*): Ի ներքուստ դռփիւն ոտից և շոնջիւն աթոռոց և ի վերուստ յոխորտ հնչիւն երգեհոնին ապուշ կրթէին զմեզ զօտարս այնպիսի տեսլարանաց: Ապա սկսաւ կարգ պատարագին: Եպիսկոպոսն քարոզէր ի սեղանոյ անտի և սարկաւագապիտի նոցա առեալ կորբան ի ձեռին հաւաքէր զողորմութիւն եկեղեցւոյն. զոր առեալ պատարագողին մատոյց առաջի Աստուծոյ ի սեղան անդր: Եբաց տպա զսկիհն, և յոսկի որուակէ անտի որ զնովաւ, եհեղ ի նա գինի. առ և զմաղզմայն լի բեկորով հացի, օրհնեաց, գոհացաւ, խաչակնքեաց, երեկ, զնոյն արարեալ և ի բաժակին, ճաշակեաց նախ ինքնին. ապա հրաւիրեաց և Հօր մերում Աբրահամու հաղորդել. այլ նորա ասացեալ թէ անհնար էր Հայոց նախաճաշեալ մատչել ի խորհուրդն անապական, հրաժարեաց ի նմանէ և ողջունեալ զիրեարսն մեկնեցան:

«Յետ իբր հնդետասան աւուրց, այն ինչ պատարագէր Հայր Աբրահամ, հասարակ հաւանութեամբ Ազգիս մերոյ ընակելոյ ի Կալկաթա. կոչեալ զնա յեկեղեցի մեր ետ նմա աթոռ յաւագ դասու սեղանոյն: Իսկ երանելին չբաղմեցաւ ընաւին, այլ ի սկզբանէ ցաւարտ Պատարագին ի ծունր խոնարհեալ ահիւ և երկիւղիւ զպաղատանս մատուցանէր յԱթոռ յաւիտենական Շնորհաց»:

Յետ սգալի մահու Տեառն Ռեջինալտայ Հիրբ եպիսկոպոսին որ զրաւեցաւ ի հասակի 43 ամաց՝ յամսեանն Ապրիլի, 1826 ամին, ի Տրիշնոպոլի քաղաքին, Հարաւային Հնդկաց, Նաղարեթայ Ս. եկեղեցին մեր մեծահանդէս պատարագաւ կատարէ զտօն յիշատակի երջանիկ փոխման նորա. որոյ և քաղցր յիշատակ օրհնութեամբ խնկեսցի ի մէնջ ի յամայր ամս:

Ներուն հայցեալ վասն բազմատող գրութեանս, զոր ակն ունիմ ընթերցողք պատուական Հանդիսիդ ունին ընթեռնուլ անձանձրոյց, խորին մեծարանաց և շնորհակալեաց հաւաստեօք,

Մնամ

Խ. Ծ. Ձեր և հայրենակից

ՄԵՍՐՈՎԲ Յ. ՍԷՔԵԱՆՑ

ԲԵԹԼԵՀԷՄԻ ԾԱՂԻԿ (*)

Եւ բղխեսցի Գաւակաւ յարմատոյն Յեսսեայ եւ ելցէ ծաղիկ յարմատոյ անտի „: Եսայի. ԺԱ. 1.

Ս ե՛ծ ահանդէս ատենի ծննդեան
Խորենացին է երգահան,
Որ ըզքնար հոգւոյն առեալ
Թրուչի երթայ Երուսաղէմ,
Բեթլէհէմի սուրբ այրին դուռ
Նստի, երգէ զՓրկչին ծընունդ:
Եւ զիմ հոգիս, երդիչ սուրբ Հայր,
Տար ընդ հոգւոյդ ի Բեթլէհէմ.
Ես ձայն առնում և դու երգէ
Ճաղանչիւն քո չարական,
Զոր քո մատունք բանահիւսէր.
«Խորհուրդ Մեծ և Սքանչելի,
Որ յայսմ աւուր յայտնեցաւ»:
Ո՛ւմ յայտնեցաւ, զարմանա՛ց բան.
Ո՛չ իմաստնոց աշխարհիս այս,
Այլ հօտարած հովիւներուն:
Թողուց Աստուած Երուսաղէմ,
Թողուց տաճար Սողոմոնին,
Անշուք այրին մէջ յայտնեցաւ.
Թողուց բանգէտ մեծ բաբունիք,
Աստուածաշունչ գրոց նօտարք,
Հապա դպիրք փարիսեցիք,
Որ պանծային յանձինս իւրեանց,
Սքանչելի և մեծ խորհուրդ
Անգէտ հովուացըն ծանուցաւ:
Վասն է՞ր այսպէս կամեցաւ Հայր.
Լու՛ր, քեզ Պողոս տայ պատասխան,
Թէ՝ ըզյիմարս ընտրեաց Աստուած,
Որ իմաստունս ամօթ առնէ:
Աթենական յԱրիսպագին
Հովիւ Պողոս բանախօսեց,
Զխաչի ճառէն և զխաչելոյն,

(*) Մեր ալեղարդ Հայրապետի սոյն գեղեցիկ քերթուածն որ ներկայ տարեւոյս սկիզբներն զառաջինն հրատարակուեցաւ ի Ս. Էջմիածին՝ ցոյց կըտայ որ Մուսայէց աւիւնը տակաւին կըբորբոքի ի սրտի անմահ Հեղինակին Հրաւիրակ Երկրին Աւետեաց և Հրաւիրակ Արարատայ դիւցազներգութեանց:

Զնոյն մեռեալ և յարուցեալ,
Շնորհն Աստուծոյ երևեցաւ,
Փրկիչ եղև Աղգի մարդկան։
Գիտնոց կաճառք Աթենացւոց
Ասեն ընդ ծաղր և զարմանան.
Զի՞նչ նորալուր բան խօսի մեզ,
Սերմանաքաղ մըչակըս այս։
Եթէ ասեն անհաւան միտք,
Հովիւ վկայք մեզ չեն յարգի,
Աստուած հանեց տարաշխարհէն
Իշխանաւոր այն մեծ մոգեր,
Որ տեսնեն աստղ մի յԱրևելս,
Լուսապայծառ էր իւր ծագումն։
Մի տաղասաց բան ըստեղծէ.
Ի մէջ աստղին տեսայ մի Կոյս
Եւ Կուսին գիրկ մանուկ Յիսուս։
Գուշակելով Փրկչին ծնունդ,
Մոգերն եկան լի հաւատով,
Երկիրպագին Փրկչին մերոյ։
Լոյս ծագեցաւ Երուսաղէմ,
Զտեսաւ անբաղդ Երուսաղէմ,
Ո՛հ ծածկեցաւ նորա աչքէն.
Աղգ հեթանոս տեսաւ հեռուստ,
Երկրպագեց և հաւատաց,
Աղգ հեթանոս վկայ եղև,
Փառաւորի Փրկչին ծնունդ։
Եսայիաս կանխաճայնէր.
Ցուշ առնեմ ՔԵզ, ծառայ Յակոբ,
Երբ տեսնաս դու Լուսոյն ծագումն,
Դու բուռըն հար, բռնէ ըզլոյսն,
Այդ քո փառքն է, մի՛ տար այլում
Որ օտար է և անծանօթ։
Ո՛հ թուլացաւ Յակոբայ ձեռք,
Աղգ հեթանոս բռնեց ըզԼոյսն,
Սոսկ փառք մնաց Յակոբայ տան.
Ծեր Սիմէօն ի տաճարին
Լոյսն ի գրկին ասաց այս բան։
Թողլով ըզկարդ նախաերգոյս
Արդ ըսկսիմ զծնունդըն սուրբ
Ծաղիկ ծաղկեալ Դաւթի տընէն,
Նախասկզբէն պատմել ոճով։

Բեթլէհէմէն հեռու մի ժամ
Կայ մի տեղի արօտավայր,
Կանաչաւէտ ու ծաղկազարդ։
Անդ է ա՞րդեօք ծաղիկ դաշտաց
Եւ կամ չքնաղ շուշան հովտաց,
Զոր Սողոմոն առնու ի յերդ,
Երգ փեսային և իւր հարսին։
Ուր ասեն թէ հովիւ Դաւիթ
Ցեսսէի տան արածէր հօտն.
Եւ այն օրէն մինչև այսօր
Տեղն այն կոչի հովուաց անուն։
Ուր հօտերուն հովիւներուն
Մի հանգըրուան է գիշերուն։
Անգէտ, տգէտ մեր հովիւներ
Երբ ժողովին ի միասին,
Նստեն ժղլեն սարէն ձորէն.
Զունին ոչինչ հետ քաղաքին։
Երբեմն պարծին իւրաքանչիւր
Գամփրոս հուժկու մեծ շներէն։
Ոմանք առնուն փող ու սըրինգ,
Քաջ երաժիշտ են հովիւներ,
Գիտեն խօսել հետ հօտերուն
Հրաւէր կարդան եղանակաւ
Նստել, հանգչել ու որոճալ.
Եւ երբ հնչեն մեղմիկ անուշ,
Այդ նշան է լինել ի քուն։
Հովիւն էլ իւր օրօրն ունի,
Ինչպէս մօր երգ օրօրոցին։

Հովիւներէն կան պսպորներ,
Որ սըրատես ճանաչող են,
Հազար հազար գառն ու ոչխար
Երբ խառնակին իրարու հետ,
Գառներ մայրեր յոյժ բառաչեն,
Մայրն ղգառնուկ, գառնուկ զմայրն
Մոլոր մոլոր որոնեն,
Պսպոր հովիւ գիտէ զատել
Մէն մի գառնուկ տայ իւր մաքուն,
Այս բան հովուին մեծ հունարն է։
Ասեն նաև թէ հովիւներ
Դեռ չի ծնած գառնիկներուն
Սեռ որոշել գիտեն փորձով.
Է՞գ է արդեօք, եթէ որձ։

Է՛ երջանիկ, դուք հովիւներ,
Թողէք սրինգ և ձեր փողեր,
Ձեզ աւետեաց փող տի հնչէ։
Ցանկարծ երկնուց լոյս փայլեցաւ,
Դաշտեր լեռներ լուսով լցան,
Հօտերն ամէն վրդովեցան,
Եւ հովիւներ մնացին ապշած։
Ասին ի՞նչ է այս հրաշից բան,
Կէս գիշեր է, չէ առաւօտ,
Արեւուն չէ այս պայծառ լոյս։
Տեսան հրեշտակ մի լուսաւոր,
Ձայն աւետեաց հնչէ վերուստ.
Աւետիս ձեզ բարի հովիւք,
Փրկիչ ծնաւ ձեզ Բեթլէհէմ,
Այս նշանակ տամ ձեզ ստոյգ,
Վազէք, գնացէ՛ք ի Բեթլէհէմ,
Մըտէ՛ք այն այր, որ դուք գիտէք,
Ուր տի տեսնաք Փրկիչ Մանուկ
Խանձարուրին մէջ պատատած,
Այնպէս դրուած է ի մսուր։

Հովիւք դարձան հայեցան վեր,
Տեսան երկնուց դուռըն բացուեր,
Լուսեղինաց ամբողջ դասեր
Բռնեցին ողջ երկնուց երես.
Սաւառնէին և խաղայ՛ին
Եւ երգէին քաղցրը ձայնով.
«Փառք ի բարձունս Աստուծոյ»։
Ասեն հովիւք ի՞նչ է այս բան,
Զոր Տէրըն մեր ցոյց տուաւ մեզ։
Ելէ՛ք երթամք ի Բեթլէհէմ,
Շնորհաւորեմք Փրկչին ծընունդ։
Առէ՛ք մեզ հետ մատաղ գառներ,
Տանեմք մեր ձոն Փրկչին նուէր։
Առէք սպիտակ փափուկ բուրդեր,
Մանեմք փռոց չոր մսուրին.
Մեր դաշտերու ծաղիկներէն
Շուշան ծաղիկ և անթառամ,
Քաղեցէ՛ք, փունջ փունջ կապէք,
Մեր նոր ծաղիկ մանուկ Փրկչին
Ծաղիկներով պըսակ դնեմք։

Մի հովիւ էլ այս բան յիշեց .
Ասաց , անշուշտ Փրկչին ծնողք
Ցոյժ աղքատ են և չքաւոր ,
Որ իջևան մի չեն գտեր
Մեր Բեթլէհէմ քաղաքին մէջ ,
Եկել գտել են մեր այրիկ
Մութ ու մրճոտ և յոյժ փոքրիկ :
Ես էլ կուզեմ , մաքին կթեմ ,
Մի պուտուկ կաթ առնեմ , տանեմ :
Ուտէ աղքատ ծընող մայրիկ ,
Շուտ շուտ ծիծ տայ մանուկ փրկչին :

Հովիւք հասան մրտին սուրբ այր ,
Տեսան իրենց մրճոտ մութ այր ,
Համակ լուսով լըցուած էր այն ,
Եւ լուսոյ մէջ լուսածին Մայր :
Տեսան Փրկիչ խանձարուրով
Պատած , դրուած ի մրսուրին ,
Մի կողմ իշուկ մի էր կապուած ,
Միւս կողմ եզնիկն էր պարարակ ,
Եւ ի մէջի Փրկիչ մանուկ ,
Զոր Ամբակում տեսաւ հոգւով :
Մեր հովիւներ քաղաքավար .
Ողջոյն , ասին , ո՛վ Տիրամայր ,
Մեք հովիւներս դաշտի ծառայքս ,
Պարզ միամիտ չինական եմք ,
Ոչ գիր գիտեմք և ոչ կարդալ ,
Անբան հոտին եմք պահապան :
Զեմք ի համար մարդկան դասին ,
Մարդիկ զմեզ կոչեն անբան .
Մի՞թէ անպէտ մարդ է հովիւ .
Հովիւն էլ իւր չընորհն ունի ,
Հայր Աբրահամ մեծ հովիւ էր ,
Բոլոր որդիքն Յակոբայ
Հովիւ էին և հօտարած ,
Օրհնեալ լինի Փրկչին ծընունդ ,
Հովիւներուս յարդ բարձրացոյց .
Զի Տէր Աստուած մեր հաճեցաւ ,
Թողուց քաղաք Երուսաղէմ ,
Թողուց բանդէտ մեծ բարունիք ,
Հովիւներուս յայտնեց իւր փառք :
Մի լուսափայլ հրեշտակ երկնուց
Մեզ աւետեց Քո սուրբ ծնունդ .

Ասայ . դնացէ՛ք ի Բեթլէհէմ,
Տեսէք Փրկիչ ի մէջ մսրին :
Ահա եկանք , տեսանք աչքով .
Երկիրպագեանք մեք հաւատով
Մանուկ Փրկչին և ծընող մօրդ :

Մեք ուրախ եմք և շատ ուրախ ,
Հովիւներուս անչուք այս այր
Աստնչական եղաւ Քեզ , Մա՛յր :
Մեք ի՞նչ ընծայ տամք մեր Փրկչին ,
Զունիմք ոսկի և թանգ բաներ ,
Դաչտի վաստակն է մեր ընծան :
Ահա բերենք մենք գառնուկներ
Մատաղացու Հայր Յովսէփին ,
Բերենք փափուկ գառանց բուրդեր ,
Քրոց արա խեղճ մանկիկիդ ,
Որ դրեր ես ի մէջ մսրին ,
Վեր չոր դեռնին և չոր յարդին :
Դու ձեռահիւս գիտես , Մայրիկ ,
Մեր բուրդերէն մանէ հիւսէ
Անկարանի մի պատմուճան ,
Տաքուկ , տաքուկ հագնէ մանկիկ :
Մեր ծաղկաբեր հովիտներէն ,
Ծաղիկներու փունջեր բերենք ,
Դիր ի մսուր խանձարուրին ,
Ծաղիկ ծաղկին քո զարդարանք :
Բերենք ոսփոր մի մաքու կաթ ,
Անուշ արա , առատ առատ :
Քանի մընաս մեր այրին հիւր ,
Մենք տի բերենք քեզ կաթ մածուն ,
Դու մնչա կա ! տուր երեխային ,
Որ չուտ աճի և զօրանայ .
Եւ մեր Փրկիչ , զոր դու ծնար ,
Աղջ աչխարհիս հոլիւ լինի :
Մենք հովիւներս լեռնացի եմք ,
Պարտաւոր եմք հօտեր պահել ,
Գիշեր ցորեկ հրսկել հօտին ,
Դուցէ չկարեմք կրկին անգամ
Գալ համբուրել մեր Փրկչին ոտք :
Թոյլ տու՛ր , ո՛վ Մայր , վերջին անգամ
Մօտիմք մսրին և համբուրեմք
Սուրբ խանձարուրը մեր Փրկչին :
Օ՜խ , ի՞նչ անուշ հոտ է բուրում ,

Մի երկնաբոյս ծաղիկ է Սա.
Մեր դաշտերուն ծաղիկ չէ այս,
Մեր ծաղիկներ ծաղկին գարուն,
Երբ գայ աշուն թոռմին թափին.
Իսկ այս ծաղիկ անթառամ է,
Հոտով, գունով անմահ է։
Մընաս բարո՛վ, Մա՛յր երջանիկ,
Աստուած պահէ որդւոյդ արեւ։
Հարցէ՛ք թէ ինչ արաւ Յովսէփ
Հովիւներուն բերած գառներ,
Բոլոր մորթեց, մատաղ արեց,
Բեթլէհէմի կարօտ մանկտին
Երբ լսեցին թէ մատաղ կայ,
Ողջ թափեցան սուրբ այրին դուռ,
Կերան կուշտ, կուշտ գառանց մատաղ։
Հարցին՝ ու՞ր է մանուկ Յիսուս,
Մեք համբուրեմք Նորա սուրբ ոտք,
Որ ի չընորհս իւր ծընընդեան
Փաղցած մանկտին կերաւ մատաղ։
Շնորհակալ ենք, Հայր Յովսէփ,
Աստուած պահէ քո երեխէն,
Նա մեծանայ և զօրանայ
Իշխան լինի Բեթլէհէմին։
Ես աստ յիշեմ Երուսաղէմ,
Չ' կարեմ մոռնալ Երուսաղէմ.
Յիշեմ սուրբ ծնունդ և Բեթլէհէմ։
Ո՛վ միաբանք սուրբ Սաղիմայ,
Զոյդ Յակոբեանց մեծ Աթոռոյն,
Որ ի տօնի սուրբ ծընընդեան,
Երթայք խմբով ի Բեթլէհէմ,
Տօն կատարէք մեծահանդէս,
Եւ մեծամեծ կանթեղներով
Դուք պատրաստէք ըզհարիսէն,
Ողջ ժողովուրդ Բեթլէհէմի
Ուտեն կուշտ կուշտ ըզհարիսէն.
Դուք յիշեցէք, զիս մի մոռնաք.
Փոքրիկ պուտկիկ մի հարիսայ
Տուէք հրեշտակին Ամբակումայ.
Առնէ բերէ ի յԱյրարատ,
Ուր տքնում է Հայոց Հայրիկ։
Ես կարօտ եմ և յոյժ կարօտ
Բեթլէհէմի հարիսային։
Հայր Յովսէփայ մատաղի բան
Դուք փոխեցէք զհարիսա,
Պինդ պահեցէք դուք այդ աւանդ
Ի յիշատակ Փրրկչի ծընընդեան։

ՆԱՄԱԿ ՌՈՒՍԱՍՏԱՆԷՆ

(Մեր պատուական Ռուսահայ բաժանորդաց ի միաւորութիւն կրիտարակերմ հետեւեալ գրութիւն զոր ստացած եմք Թիֆլիսի Գրաֆիկական Պաշտօնեութենէն։)

Գերապատիւ Հայր Սուրբ.

Ձեր հրատարակած «Հայ. Եկեղեցի» կրօնաթերթը անխափան թոյլ է տրվում մուտք գործելու Ռուսաստանի սահմանը, և Ձեր բաժանորդներն անարգել ստանում են իր ժամանակին, վասն զի ցենզուրական կոմիտէն ցայժմ արգելած չէ նորա մուտքը Ռուսաստանում։

Մնամ յարգանօք, խոնարհ ծառայ,

Թիֆլիս, Յուլիս 16 1901։ Ա. ՔԻՇՄԻՇԵԱՆ.

ԱՋԳ

Ի գիտութիւն մեր Եպիսկոսի պատուական բաժանորդաց՝ կրծանուցանեմք որ մեր Եպիսկոսի գործակալ Արժ. Տեր Եզնիկ քահանայ Պալունիէն ստացած ենք շնորհակալութեամբ ամբողջ երկու տարուայ (1900 եւ 1901) բաժանորդագիներն։ — Խմբագրութիւն *Հայ-Եկեղեցի* կրօնաթերթի։

Մանչեսթր, Սեպտեմբեր, մ 1901։

ԱԶԴ

Կրօնաթերթիս անցեալ տարուայ թիւերն այլևս բաժանորդագրութեան պայմանաւ չեն ծախուեր. այլ Ա. – Ժ թիւերն միասին կը վաճառուին՝ անկազմ 4 Շիլինգի (5 Ֆրանքի). գեղեցիկ կանաչագոյն լաթակազմով՝ ոսկեգծեալ վերնագրով՝ 5 Շիլինգի (6 Ֆրանքի):

Յետայսու նոր բաժանորդագրութիւն կընդունուի միայն ներկայ տարւոյս Յունուարէն կամ Յուլիսէն: